

Թոխատի, եւ, ոչ միայն այդքան, այլ թէ նաեւ այնուհետ աշակերտ է հասցուցած ու արեւոյ ձեռնադրած այդ թուականներուն:

Ի դէպ, Սարգիս Սահլթեմին միակ աշակերտը չէր Ամթեցուն. անոր երկու նըշանաւոր աշակերտներն էին Մկրտիչ Զուգայեցին եւ Միքայէլ Թոխատցին, որոնց մասին թեթեւ ակնարկութիւն մը բերնք վերեւ:

Այլեւս տարակույս չի մնար, թէ Մինաս Ամթեցին 1666-ին եպիսկոպոս ձեռնադրուած էր Թոխատի վրայ, որուն առաջնորդն էր մինչեւ 1674:

Բայց այսուհետ չեն վերջանար Արցոյսահանի «հաւաքութիւն»ները: Շարունակենք — «Հաւանորէն 1685-ին իրեն (իմա՛ Կիրակոս Եպոս.ին) յաջորդած է Մինաս Ամթեցի» (Պ. Ե. Հ., էջ 644):

Հարկ կա՞յ այս անձոնի սխալին վերայ երկարորէն ծանրանալու: Սխալ մը, որ կը կրկնէ Արցոյսահան, գրելով. «Մինաս Ամթեցի (1686 Յունվար 10 - 1688 Յունվար 21) - ըստ իր Օրագրութեան, կը վարէ Թոխատի առաջնորդութիւնը»:

Կը պնդենք, թէ Օրագրութեան մէջ Թոխատի «առաջնորդութեան» խօսք չկայ 1688, ինչպէս ըսի (էջ, քանի որ ինք կ'ըրեան ո՛ր օրը, ո՛ր էջը: Բայց որովհետեւ 24ԱՅ, Արցոյսահան երրորդ անգամ միեւնոյն սխալը կ'ընէ, գրելով — «1686-1688, ինչպէս ըսի (է՛ջ, քանի որ ինք կ'ըրէ, բաւական է) «Թոխատի առաջնորդութիւնը կը վարէ եւ ապա կը դառնայ Մայրաքոն»:

Բնութիւնի սխալ: Ամթեցին, ինչպէս 1682-83 (11 ամիս), 1886-88-ին ալ Թոխատի նուիրակ է եղած, բայց ոչ առաջնորդ, քանի որ ան այդ տարիներուն առաջնորդն է Չնքուշի:

Օրագրութեան Չնքուշի վերաբերեալ 24 էջերը մեր արամադրութեան ներքեւ են եւ պիտի հրատարակուին մօտեւ լոյս ընծայուելիք Չնքուշապատումի մէջ, որպէս յաւելուած: Անոնք կը փաստեն, թէ Ամթեցին զԺողո՛ւ մեկնած է Թոխատի իր 11-ամսեայ նուիրակութենէն (Օրագրու-

թիւն, 1684 Յունուար 20 եւ Դեկտ. 1): Հասկանալի է, ուրեմն, որ Չնքուշին էջմիածին վերադառնալէն յետոյ, 1685-ի վերջերը, Ամթեցին նորէն որպէս նուիրակ զրկուած է Թոխատ եւ Կարին 1686-ին:

Բազմաթիւ այլ փաստեր կան հաստատող մեր վանքի պատմիչ Տ. Մովսէսի այն հաւատումը, թէ Մինաս Ամթեցին, որ 1679-1703 Չնքուշի առաջնորդ էր, նրվրակութեամբ չըջապայած է չառ տեղեր 24 տարի, իր վրայ պահելով Չնքուշի առաջնորդ-վանահայր տիտղոսը:

Մինաս Ամթեցին նոյնիսկ 1685 Դեկտեմբերին, էջմիածնի մէջ, չէ ընդունած նահապետ կաթողիկոսին իրեն առաջարկած առաջնորդութիւնը Կարնոյ (տես վերեւ, Սալուանեանց, «Պ. Ե.», էջ 645): Եւ ի՞նչպէս գերադասէր Ամթեցին Կարնոյ առաջնորդութիւնը Չնքուշինէն, երբ զինք որդեգրող այդ քաղաքին զովքը երկած էր բազմաթիւ յիշատակարաններով ու տուգրով:

Այո՛, Չնքուշիի որդեգիր Մինաս Ամթեցին Չնքուշը սիրած է չա՛տ աւելի քան սեւէ հարապատ Չնքուշի: Փա՛ստ: Ահա-ւասիկ.

«Արդ եւ եկեղեցիին ամենայնտիւնը եւ քարոզիչներու ամենաստորիքը, Տիգրանակերտցի Մինաս վարդապետս, գտայ Ս. էջմիածնի մէջ այս գիրքը, զոր գողցած էին Շէնքուշի վանքէն, իմ նախակրթուած արքունէս: Զայն օրինակած էր Մարտիրոս վարդապետը, որ ուսուցիչն է Չնքուշի Յովհաննէս վարդապետին, եւ Յովհաննէսը ուսուցիչն է Եղիազար Կաթողիկոսին եւ Մարկոս վարդապետին, եւ Մարկոս վարդապետը՝ ուսուցիչ ինծի՛: Ամբեցի Մինաս վարդապետիս: Եւ որովհետեւ Շէնքուշի Ս. Աստուածածին վանքէն այս գրքին հեռացումը ծանր եկաւ ինծի, այս գրքին տեղը տուի պատուական գիրք մը՝ Կոչումն ընծայութեան, եւ շաշու գիրք մը, երկուքը մէկ տուփի մէջ, եւ առի այս կորիքի Մեկնիչը, զոր մեկնեք է ներսէս Լամբրոնացի վարդապետը, եւ զըրկեցի Շէնքուշի Ս. Աստուածածին վանքը, ի յիշատակ գրքիս ծաղկողին՝ Տէր Մար-